Bookmark

Andris Kalnozols

KALENDĀRS MANI SAUC

ROMĀNS

BookMark

Անդրիս Կալնոզոլս

ԵՍ ՕՐԱՑՈՒՅՑՆ ԵՄ

վեպ

Թարգմանությունը լատվիերենից՝
Նաիրա Խաչատրյանի

newmag

ԵՐԵՎԱՆ
2022

Bookmark

ՀՏԴ 821.174-31 Կալնոզոլս
ԳՄԴ 84(4Լատ)-44
Կ 155

Կալնոզոլս Անդրիս
Կ 155 Ես Օրացույցն եմ: Վեպ / Անդրիս Կալնոզոլս.- Եր.: Newmag, 2022.- 352 էջ:

Վեպի առանցքում Լատվիայի մի փոքր քաղաքում ապրող յուրօրինակ «փոքրիկ մարդու» կերպարն է: Նա գրեթե չի շփվում այլ մարդկանց հետ: Ամբողջ վեպը գրված է որպես հաղորդակցության բացակայությանը փոխարինող տեքստ: Սկզբում հերոսը՝ Օսկարը, իր մտքերը նոթատետրում գրի է առնում՝ տեղի հոգևոր հովվի հետ հաղորդակցվելու համար, ապա՝ որպես օրագիր: Ամեն ինչ փոխվում է, երբ Օսկարի կյանքում հայտնվում է մի անծանոթ գեղեցկուհի: Հերոսը սկսում է անել քայլեր, որոնք նրան մինչև այդ թվում էին անհաղթահարելի:

ՀՏԴ 821.174-31 Կալնոզոլս
ԳՄԴ 84(4Լատ)-44

ISBN 978-9939-884-50-9
Copyright © Andris Kalnozols, 2020.
Original edition © ORBITA, 2020.
First published as “Kalendārs mani sauc” by ORBITA in Riga, Latvia.
Անդրիս Կալնոզոլս «Ես Օրացույցն եմ» © 2022, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության բոլոր իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Orbita ընկերության հետ կնքած պայմանագրով:

Ministry of Culture
Republic of Latvia

LATVIAN
LITERATURE

This book was translated and published with the support of
the Latvian Literature platform together with the Ministry of Culture of
the Republic of Latvia.

Այս գիրքը թարգմանվել և հրատարակվել է
«Լատվիական գրականություն» հարթակի և Լատվիայի
Հանրապետության մշակույթի նախարարության աջակցությամբ:

BookMark

Բովանդակություն

1-ին շաբաթ	**«Կարևորը»**	11
2-րդ շաբաթ	**«Մայրիկը»**	18
3-րդ շաբաթ	**«Գիրք»**	24
4-րդ շաբաթ	**«Հասցեներ»**	32
5-րդ շաբաթ	**«Ստեր»**	37
6-րդ շաբաթ	**«Հիմա»**	42
7-րդ շաբաթ	**«Ընկերը»**	51
8-րդ շաբաթ	**«Արթնություն»**	59
9-րդ շաբաթ	**«Կարոտ»**	66
10-րդ շաբաթ	**«Համբերություն»**	72
11-րդ շաբաթ	**«Գործեր»**	80
12-րդ շաբաթ	**«Բարեգործություն»**	86
13-րդ շաբաթ	**«Լուսարձակում»**	94
14-րդ շաբաթ	**«Ջերմություն»**	102
15-րդ շաբաթ	**«Հակառակ»**	113
16-րդ շաբաթ	**«Բացահայտում»**	118
17-րդ շաբաթ	**«Անհետացում»**	124
18-րդ շաբաթ	**«Կարգուկանոն»**	128
19-րդ շաբաթ	**«Զրույցներ»**	134
20-րդ շաբաթ	**«Երեխաներ»**	141
21-րդ շաբաթ	**«Ագարիո»**	148
22-րդ շաբաթ	**«ABBA»**	153
23-րդ շաբաթ	**«Այսօր»**	160
24-րդ շաբաթ	**«Պատմություն»**	165
25-րդ շաբաթ	**«Համարձակություն»**	171
26-րդ շաբաթ	**«Փոփոխություններ»**	177

BookMark

27-րդ շաբաթ **«Աղքատություն»** 184
28-րդ շաբաթ **«Երազներ»** 192
29-րդ շաբաթ **«Ամոթ»** 200
30-րդ շաբաթ **«Պատրանք»** 208
31-րդ շաբաթ **«Դիտարկում»** 216
32-րդ շաբաթ **«Շարժում»** 223
33-րդ շաբաթ **«Տարիք»** 229
34-րդ շաբաթ **«Դետեկտիվ»** 234
35-րդ շաբաթ **«Մասնագիտություն»** 241
36-րդ շաբաթ **«Փորձ»** 247
37-րդ շաբաթ **«Գալուստ»** 254
38-րդ շաբաթ **«Հյուրընկալություն»** 261
39-րդ շաբաթ **«Կատակ»** 268
40-րդ շաբաթ **«Ապագա»** 275
41-րդ շաբաթ **«Ամպրոպ»** 280
42-րդ շաբաթ **«Գործընթաց»** 285
43-րդ շաբաթ **«Չխոսել»** 289
44-րդ շաբաթ **«Առաջնախաղ»** 296
45-րդ շաբաթ **«Թաքստոց»** 301
46-րդ շաբաթ **«Անուններ»** 307
47-րդ շաբաթ **«Ավազակախումբ»** 312
48-րդ շաբաթ **«Զբոսանք»** 316
49-րդ շաբաթ **«Խոստում»** 321
50-րդ շաբաթ **«Մահ»** 326
51-րդ շաբաթ **«Հավատ»** 333
52-րդ շաբաթ **«Հույս»** 341
Վերջին շաբաթվա սկիզբը 347

BookMark

Ասպված գալիս է մեզ մոտ որպես կյանք:
Պոլա Դարսի

BookMark

Հուլիսի 8

Այսօր Անտրան, Ադելեն, Ադան նշում են իրենց անվանակոչության օրը: Գուցե նրանցից ինչ-որ մեկը չի նշում այդ օրը: Մարդիկ միշտ չէ, որ նշում են անվանակոչության օրերը: Ոմանց համար դա կարևոր չէ: Օրինակ՝ ես իմը չեմ նշում: Իսկ մայրիկը նշում է: Իմը: Իսկ իրենը չի նշում: Նրա համար դա կարևոր չէ:

Հուլիսի 9

Զայգա, Ասնե, Ասնա: Եթե Զայգան, Ասնեն ու Ասնան ուզենան ինձ հետ ծանոթանալ, ես պետք է պատասխանեմ՝ Օսկար: Բայց ես այդպես չեմ անի: Քանի որ ես մարդկանց հետ գրեթե չեմ խոսում: Միակ բանը, որ նրանց ասում եմ՝ անվան օրը որն է կամ օրվա անունները որոնք են: Երկու ձևով էլ սովորել եմ: Այդ ժամանակ նրանք ծիծաղում են, իսկ ավելի հաճախ՝ ստուգում:

«Դու լրիվ դեմք ես, Օրացո՛ւյց»,– այսպես են հաճախ արձագանքում դպրոցականներն ու վազում իրենց գործերով: Բայց հիմա ամառ է, ու նրանք ոչ մի գործ էլ չունեն: Եվ, այո՛, այս փոքրիկ քաղաքում ինձ անվանում են Օրացույց, որովհետև ես անգիր եմ արել անվանակոչման բոլոր օրերը: Իսկ շատերը, ովքեր ինձ խոսեցնում են, չգիտեն, որ իմ անունն Օսկար է: Նրանց համար դա կարևոր չէ:

Հուլիսի 10

Ես նաև ամեն շաբաթվա համար ընտրում եմ մի բառ ու մտածում դրա մասին: Կա մի կանոն, որ դա չպետք է լինի ինչ-որ մարդու անուն, որովհետև ես առանց այդ էլ չափից շատ եմ տարվում դրանով: Այս շաբաթվա բառն, իհարկե, «կարևորն» է: Արդեն երրորդ օրն է՝ ես անդադար մտածում եմ դրա մասին: Ինչն է կարևոր: Եվ ինչը կարևոր չէ: Այսօր ես մտածեցի՝ այդ մասին մտածելը կարևոր է: Հարցրի քահանային, ում մոտ ես գնում եմ (նա այն հազվադեպ մարդկանցից է, ում հետ ես խոսում եմ), քանի որ կարգին բժիշկ մեզ թույլ տալ չենք կարող, որովհետև մայրիկը թոշակառու է, իսկ ես չեմ աշխատում: Ես ինչ-որ համախտանիշ ունեմ ու նյարդերի հետ կապված էլի մի քանի հիվանդություն: Դա ինձ թույլ չի տալիս աշխատել, բայց թույլ է տալիս անգիր իմանալ օրացույցը: Դա այնքան էլ դժվար չէ: Իրականում շատ էլ հեշտ է: Ամեն օր մի ամսաթիվ էի սովորում: Եվ այդպես մի ամբողջ տարի: Իհարկե, ժամանակի հետ մի քիչ դժվարանում էր, քանի որ ամեն հաջորդ օրը ես պետք է կրկնեի նախորդ օրերն ու անունները: Սկզբում ինձ համար խաղուպար էր: Բայց հետո՝ առաջին ամսվա վերջում, ես այնքան էլ երջանիկ չէի: Սուրբ Ծննդյան տոներին ինձ արդեն ուզում էին ուրիշ քաղաքի հիվանդանոց տանել: Բայց դա նշանակելու էր Նրանից հեռու լինել: Մայրիկից չէ: Իհարկե, մայրիկից էլ, և այդ փաստը ևս կարևոր է, բայց այս անգամ մայրիկի պատճառով չէր: Կարելի է ասել, որ ես սիրահարվել եմ մի աղջկա: Ինձ թվում է, որ սիրահարվել եմ: Որ այդ երևույթն այդպես են անվանում: Որ դա սեր է: Ես Նրան տեսա ամառվա կեսին: Դե, ավելի ստույգ՝ հուլիսի 8-ին երկու տարի առաջ՝ Անտրաների, Ադելների և Ադաների

օրը: Ես ու մայրիկը նստած էինք «Անկյունակ» սրճարանում, որտեղ շաբաթը մեկ անգամ կարող ենք ապուր և քաղցրեղեն ուտել, երբեմն նաև՝ երկրորդ ճաշատեսակ, բայց առանց աղցանի կամ էլ միայն կոտլետներ: Մենք սովորաբար տանն ենք ուտում: Այս անգամ, փառք Աստծո, «Անկյունակում» էինք, ինչպես միշտ եկեղեցուց հետո էինք եկել: Եվ հանկարծ ներս մտավ Նա: Ես չէի կարողանում աչքս կտրել Նրանից: Ինձ հետ այդպես երբեք չի եղել: Ես մարդկանց գրեթե չեմ նայում և չեմ զրուցում նրանց հետ: Բայց եղավ ինչպես երբեք: Ես չէի կարողանում դադարել պլշել և կոլոլակներով ապուրը սկսեցի երեք անգամ ավելի դանդաղ ուտել: Մայրիկը նկատեց ու հարցրեց, թե ինչ է պատահել, ես էլ պատասխանեցի, որ չգիտեմ: Եվ ես իսկապես չգիտեի: Այդ ժամանակ չգիտեի: Հիմա ինձ թվում է, որ դա սեր է: Սերն իրեն այդպես է պահում: Նա իր ընկերոջ հետ էր, ում անունն, ինչպես հետո իմացա, Ուվիս է. նա բուսակերի նման էր ուտում: Հետո Նա դուրս եկավ: Ես անգամ չգիտեի, թե Նրա անունն ինչ է: Ես վերջացրի կոլոլակներով ապուրն ու հասկացա, որ անգիր եմ անելու օրացույցի բոլոր անուններն ու ամսաթվերը, քանի որ դրանց մեջ կլինի նաև Նրա անունը:

Ավելի ուշ, երբ արդեն մի քանի ամիս էր, ինչ անգիր էի անում, հասկացա, որ իրականում չեմ էլ ուզում իմանալ Նրա անունը, քանի որ որոշ անուններ այնքան տգեղ են, որ կարող են կոտրել իմ սիրտը: Նաև սկզբում մտածում էի, որ միայն կանանց անուններն անգիր կսովորեմ: Բայց տղամարդկանց անուններն անընդհատ մեջ էին ընկնում, և ես դրանք էլ սովորեցի: Իսկ Սուրբ Ծննդյան տոներին ինձ սկսեց սպառնալ

հիվանդանոցը, եթե չդադարեմ օրացույցն անգիր անել: Ես խոստացա դադարեցնել: Բայց մատներս խաչել էի: Հանուն Նրա: Եվ դա կարևոր էր: Քանի որ ես ուզում էի Նրան երբեմն-երբեմն տեսնել: Նայել: Բայց հետևից չգնալ, որովհետև դա իմ կողմից սիրահետում կլիներ: Եվ որ կարևոր է, երբեք չխոսել Նրա հետ, քանի որ ես Նրան ասելու ոչինչ չունեմ: Եվ այդպես ես սկսեցի թաքուն սովորել օրացույցը՝ գիշերով, վարագույրների հետևում, որովհետև սենյակի դիմաց գտվում է փողոցի լապտերը, և լույսի տակ հնարավոր է տառ տեսնել: Երբ ընդամենը մի քանի շաբաթ էր մնացել, որ վերջացնեի օրացույցն անգիր անել, ես արդեն չէի կարողանում: Շատ էի փսխում: Վերջին օրերն իսկապես շատ ծանր էին: Եվ ինձ, այնուամենայնիվ, բացահայտեցին ու տարան հիվանդանոց: Դա տեղի ունեցավ Ուվիսի անվանակոչման օրը: Բայց ես վերադարձա:

Հուլիսի 11

Այսօր ես հասկացա, որ կարևոր է այնքան շատ չգրել, որքան երեկ գրեցի: Պետք չէ տարվել: Որովհետև ես նյարդայնանում եմ, և թուղթս էլ վերջանում է: Իսկ ես գրում եմ նոթատետրում, որն ինձ քահանան է նվիրել: Նա նոթատետր է նվիրել, որ ես շաբաթվա կարևոր բառի մասին մտածեմ և որոշ բաներ գրի առնեմ: Իսկ հետո մենք կարող ենք դա քննարկել: Ես պետք է գրի առնեմ, եթե չգրեմ, կարող եմ մոռանալ: Չեմ մոռանում միայն օրացույցը: Քահանան ասել է, որ առաջին բառը պետք է կարևոր բառ լինի: Մենք երկար մտածում էինք, թե դա որը կարող է լինել: Եվ հանկարծ ես ուղղակի հասկացա:

Հուլիսի 12

Կարևոր է առավոտյան արթնանալը: Կարևոր է բարի լույս ասելը: Կարևոր է նախաճաշի համար մայրիկին շնորհակալություն հայտնելը և տան գործերում օգնելը մինչև նա ձանձրանա: Կարևոր է զբոսանքի գնալը: Կարևոր է շատ երկար զբոսնելը, երբ հորդ անձրև չի գալիս կամ դրա նման մի բան: Կարևոր է ուրիշներին հետևելը, բայց առանց պլշելու: Կարևոր է արագընթաց մեքենաներից և դռդռացող մոտոցիկլետներից, որոնք շատ բարձր ձայն ունեն, խույս տալը: Կարևոր է ասել անունն ու ամսաթիվը, եթե ինչ-որ մեկը հարցնում է, բայց չասել ավելորդ ոչինչ ու հեռանալ: Կարևոր է չշրջվելն ու հետ չնայելը: Կարևոր է թույլ չտալը, որ քեզ ծաղրեն, բայց եթե նման բան է տեղի ունենում, հեռանալը: Կարևոր է հիվանդանոց չընկնելը: Կարևոր է Նրան տեսնելը (դա սիրային գործ է): Կարևոր է տուն գնալը: Կարևոր է այս ամենի մասին մտածելը: Եթե սիրտդ խառնում է, կարևոր է պատուհանից դուրս չփսխելը, որտեղ հարևանների Թեդիսն է ապրում: Կարևոր է մայրիկի հետ ընթրելը, ցերեկը հետդ վերցրածն ուտելը, որ չմեռնես: Կարևոր է քնելու գնալն ու քուն մտնելը: Եթե երազում ես Նրան տեսնել, կարևոր է երկար նայելը:

Հուլիսի 13

Մայրիկը հիվանդացել է: Նա այդպես ասաց և պառկեց անկողնում: Նա ինձ ասաց, թե ինչ է պետք անել, և ես պատրաստեցի շատ անհամ նախաճաշ: Մայրիկն ասաց, որ շատ համեղ է, բայց նա հիվանդ է: Ես չգնացի զբոսնելու, մայրիկն ասաց, որ հանգիստ կարող եմ գնալ և զբոսնել, բայց ես չգնացի: Նստել էի բազկաթոռին, և մայրիկը պատմում էր